

Պաշտոն Վարկային մասնագետ

Աշխատանքի սկիզբ Մայիս, 2022

Տևողություն Երկարաժամկետ, 3 ամիս փորձաշրջանով

Աշխարհագրական տարածք «Ազատան» ներկայացուցչություն

Աշխատանքի նկարագրություն

• Իրականացնել պոտենցիալ վարկառուների նախնական ուսումնասիրություն, ինչպես նաև տեղում այդ հաճախորդների հետ աշխատանքների կազմակերպում՝ վարկային առաջարկների կազմման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման և ֆինանսական վերլուծություն իրականացնելու նպատակով,

- Ձևավորել և սպասարկել է վարկային պորտֆել,

- Անմիջականորեն մասնակցել նոր վարկառուների ներգրավման ու սպասարկվող վարկային պորտֆելի տարածքային ու ծավալային ընդլայնման գործընթացին,

- Նախապատրաստել և մասնաճյուղի կառավարչի քննարկմանը ներկայացնել վարկերի տրամադրման վերաբերյալ առաջարկություններ ու դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթեր

- Վարկային առաջարկները քննարկելու նպատակով Ընկերության վարկային կոմիտեում հանդես գալ վարկերի տրամադրման վերաբերյալ առաջարկներով,

- Նախապատրաստել և ստորագրման ներկայացնել վարկերի տրամադրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը,

- Կազմել և վարել վարկառուների վարկային գործեր,

- Իրականացնել վարկերի ընթացիկ սպասարկում և մոնիտորինգ. լրացնել համապատասխան փաստաթղթեր և հաշվետվություններ ու ներկայացնել դրանք մասնաճյուղի կառավարչին և/կամ Կազմակերպության Վարկային դեպարտամենտի պետին,

- Իրականացնել Վարկային կազմակերպության ներքին կանոնակարգերով սահմանված և մասնաճյուղի կառավարչի հանձնարարությամբ այլ առաջադրանքներ:

Պահանջվող որակավում

- Գործարար կառավարման, տնտեսագիտության կամ ֆինանսների բնագավառում բարձրագույն կրթություն՝ Բակալավրի կամ ավելի բարձր որակավորմամբ

- Առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ՝ բանկային համակարգում

- Հիմնական համակարգչային հմտությունների իմացություն, ՀԾ Բանկ 4.0-ի իմացությունը առավելություն է

- Թիմում աշխատելու ունակություն

- ՀՀ տնտեսության ընթացիկ զարգացումների վերաբերյալ իրազեկվածություն, մասնավորապես գյուղատնտեսության ոլորտում
- ՀՀ գյուղական տարածքների վերաբերյալ իրազեկվածությունը ցանկալի է
- Վարորդական իրավունքի առկայությունը և մեքենա վարելու կարողությունը առավելություն է

Փոխհատուցում/աշխատավարձ. Պայմանական՝ կախված թեկնածուի մասնագիտական որակավորումից և համապատասխան աշխատանքային փորձից

Խնդրում ենք, նկարով ինքնակենսագրականը (CV) ուղարկել hr@card.am էլեկտրոնային հասցեին՝ նամակի վերնագրի տողում հստակ նշելով պաշտոնի անվանումը, որին դիմում եք, կամ նկարով ինքնակենսագրականի (CV) թղթային տարբերակը նեկայացնել Ընկերության գլխամասային գրասենյակ. հասցեն՝ Երևան 0037, Ազատության 1/21 կամ «Ազատան» ներկայացուցչության գրասենյակ. Հասցեն՝ Շիրակի մարզ, գ. Ազատան, 48-րդ փ. 29/1: